Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17720

Մ. ՍԱՀԻԼԱԹԵԱՆ

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՅԻՆ ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՆԸ

(Դրամի բարբառով)

891.99
Ս-97

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ԵԱՆ ԱՐԵԳԱՏՈՒՊ» ՏՊԵՐԱՆ
1904

Ֆ31.33
Ս-97
2078
2003

Ե. Մ. ՍՈՒՐԽԱԹԵԱՆ

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՅԻՆ ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՆԸ

(Դրամի թարգմանով)

ՌԵԴԱԿՑԻԱ ԳԱԶԵՏԻ «ՄՇԱԿ»
ԹԻՖԼԻՍ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI—1922
имени А. Мясни яна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3286

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՏՊԱՐԱՆ
1904

37574 սեռ

Дозвол. Ценз. С.-Петербургъ, 19 Марта 1904 г.

21396-60

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ, 4.

Իր սիրելի մօրը՝ Մարիամ Յ. Թումանեանցին

ՆՈՒԷՐ

Հեղինակից

Մեմը, աճապ վարդևորիՆ էր, չէնէ Աստված-ծինին, անխատար միտքս չէ, պռնեցի ինձի պարտատէր տաճիկին մեքատին, որ հինդ հարուր մանէթ պարտք ունէր ինձի ու ասի, զօռ արի մարդուն օր «իրեք օրէն, ասի, վերտեխէն կուզիս կտիր պեր, զէնէ վրադ փռոշէնի կուտամ. ասի»: «Մելքօն աղա, ասաց տաճիկը, ի՛նչ կուզիս արա, ասաց, մէկ շաբաթէն առաջ պերելու չիմ կարնալ», ասաց ու նստաւ առապան կեղ կնաց համանա: Մէկն ալ ասաց՝ իտա հինդ հարուր մանէթին վրայէն մէկ մէշեպէ սալխն ճուր խմէ տէյին, մէկալն ալ — փռացէնթ շատ առիլ իս, պերանդ սրբէ ու նստէ. ես ի՛նչ կիտնամ, մէկ թալայ մասալ... Ամա՝ ես ան պանր կառնիմ, ասի, տուք իտա պառկելու տեղերդ նայեցէք, ասի... Մէկալում օրը կիրակի էր — սապախթան կանոխ էլլայ տօշակէս ու թէղթէդ կնացի ժամ: Տէրտերը տահա էկած չէր, ամա տիրացուն արդրխ խանտիլներուն եղը կուլլէր ու թողերը կրսրբէր: Առի համանա մէքամ հինդ քափիկնոց մոմ, տարի շիտակ վառեցի սուփ Կեւորգին տիմացը ու պաշլայեցի աղօթք անելու. «Սուփ Կեւորգ, ասի, տուն բարեխօս էղիր, որ իտա իմիս հինդ հարուրատիկ մանէթս պօթէն տեղը եօխ չ'լայ չէրթայ, ասի. ան շուն-

շանօրթի տաճիկին խելքը մետոմը կլօխը պեր, իմիս իտա ստակս թօ տայ ու անկից վերջը, մեռնիմ զօրուրթեանդ, ասի, կուզիսնէ փէզևէնկին հոգին ալ առ, ասի»: Ի՛նչ կասիս, ճանրս, թէքմիլ մէկ շաբաթ չանցած, մեմալ նայիմ — ատ ս. Կեւորգին զօրքն էր կիտի՞ս — աղլի տաճիկը էկաւ ու ստակս փռացէնթով թախրմով տուից: Իրեք օր անցիլ էր տա զայիր՝ մեմալ կլրսիմօր աղլի մարդը ծիէն վար ինկիլ է ու մեռիլ է կեղին ճամփան: Շթէ՛, ճանրս, իտաւուր համար սուփ Կեւորգին ես խիստ պէթէր կը հաւատամ, կասէր Մելքօն աղան:

Ան պասը ասիսնէ — Մելքօն աղան անխարէրին կ'սիրէրօր, սատէ օրեր համբելէն կը նստէր՝ ե՛փ պիտ գայ իտա պասը տէյին:

— Պասը, կասէր Մելքօն աղան, հէ՛մ քիրիստոնէութիւն, Աստված չ'մոռնալ է, հէ՛մ ալ ճէպիթ վաստակ: Կուզիսնէ հէսապ արա, կասէր. նայէ՛, իմիս սէմէյսթիս վեց հոգի է. ուտիս էղած ատեններս՝ չորս ֆունթ միս կառնիմ — կանէ քառասուն ուրթը քափիկ. անոր եղը կայ, ֆէրմէշէլը ես մաքառօնը, ես չէնէ քառթօֆը, պիրինձը. ատ ալլայը մէկ հէսապ անելու լ'ասնէ, սատէ կերակուրը է՛նկօլմատրմ վացցուն քափիկ կ'նրստի ու կ'նրստի: Ամա պասի կերակուրը նայէ՛. էրկու ֆունթուկէս

լոպիայով ետ սրսեռով հէ՛մ հօրսուկը կրկշտանաս, հէ՛մալ իրկուան համար քիչմը կրմնայ։ Լոպիային ֆունթնալ չորս քափիկ է. շթէ՛, կնա նայիմ շինար հէսապ արա։ Հապա ան կովին կաթն ու կարագը որ կրպայիս, թօվ կանիս ու կ՚ծախինէ՞...

Ասպէս կասէր մեր ագլի «քիրիստոնեան» ու իրեն էրկու հատիկ արտրխ հասած, ամա քիչմը հիւանդոտ աղջիկներուն ալ կռև շամաթայով զօռովէն պաս պռնելու կուտար։

—Զինկարնանքն է՞, պապա, ի՞նչ անինք. հա՜յ-հա՜յ, էկէր առողջ լ՚այինքն է կրպռնէինք, տահա կուզիանէ ծում ալ կ՚կենայինք, կասէին մախսումները։

—Ծաներ դ կռռեցէ՛ք, շունին ցննածնեբը, անսահաթը կ՚կանչվռտէր վրաները Մելքօն աղան, հրման չունանա՛ք մեմալ տիմատառցութին անելու տիմացս...

Ու սիրար էլլածէն՝ կառնէր թայախը ու համանա խաւէ կէրթար։

—Կէնէ ի՞նչ էղիլ է քեղի, Մելքօն աղա, կ՚ը հարցունէր անսահաթը խաւէնի Կարապետը, չրայթ ալայ-մալայ փախիլ է ու...

—Է՜է՜է՜յ, աղբարբ՚ս, շինտխվան ժամանակս սէմէյսթվա ունանալը—խաղէպէ, խաղէ՞պ. Ասվածմի արասցէ, կասէր Մելքօն ա-

ղան ու եախան կպաշլայէր թափելու։ Ախրուզամանն է, ինչ պապայիս ցաւն է, մեռոմը չափ չիքտին, խարէր չիքտին, ի՛նչ ուտելուլի կօղտէ, ի՛նչ հագնելուլի. անանը էշէկ էսրն թափ...

Ամ ալ պէտք է ասելօր՝ խաւէնի Կարապետը հի՛չ մէկինմէն ալ վախեցող մարդ չէր, զէրէ ալլտին ալ կէլլէր շիփշիտակ կասէր համանա. իլլեքի մէռոմը կռատուսը պացրռ լ՚արնէ... Ամա զարմանալուն ան էր օր, ագլի Կարապետին վրան Մելքօն աղային պիլեմ սիրտը չէր էլլէր ու «за оскорбленіе» ասէին փռօշէնի չէր տար։

—Է՛յ, Մելքօն աղա, կասէր համանա Կարապետը էրկու ծեռքն ալ էտեր արնելէն, իտախատար զէնկրնութին ունիս, իտախատար քափիթալ, զամէթալ լ՚անէ մեմը ինձի ասիսնէ՝ սա քուկուդ աղջիկներուդ ետ չէնէ օրդոցդ համար չրխարճիանէ, հապա որի՞ն համար կրպայիս իտա թէրմաշ ստակներդ։ Ազգի՞դ, հայութիանդ համար, ետ չէնէ մէկ աղէկութին անիմ ասէին չալշմիշ էղող մարդ իս օր ասլը, որ հա՜—ասպէս մէքամ բարեգործութին անելու համար կրպայէ ասիմ։ Զէնէ՞, Մելքօն աղա, միտք ունիս հետդ տանելու. չանելու հանավար ալ չիս սանքի...

—Հաձէ Կարապե՛տ, կրլմննա՛յ, կրլմննա՛յ.

խապէր ունի՞ս ասը, խապէր ունի՞ս։ Ուտելիքի համար Աստվածային իր տուած օրը տունեային ստակը կէրթայ. ան տղոցս ու կնկանս ուռպաներուն կնացած խարճը ասիսնէ—խևնալու պան է թամամ. ամա տուք կիտի՞ք ատ... Ես, աղբարը՛ս, ծեզի պէսնակ շլթէ փարային խաթռը չկիտցող փէղևէնկ չիմ, որ ասսր կայ—ասսր ուտիմ, վաղուանն ալ՝ վաղը նայիմ ասիմու, ունացած-չունացածս աւուրում աւուրում անելէն վերջացունում...

— Տուն ինձի ան ասա, կպաշլայէր տաքնալու Կարապետը, իտա կեղէդ տասը-տասներկու հազար մանէթ տախսթ կառնի՞ս տարին, չէնէ չէ։

—Էյ, հա՛։

—Իտախատար առնելէդ վերջը էնկօլմատրմ մէկ քանի հազարը այամիշ անելու չիս տա սէմէյսթվայիդ պէտքին համար. փառք Աստոյ ինձի ետ մէկալին համար չէ եալ, քեղի, կնկանդ ու տղոցդ համար է։ Անցած տարի էրկու կառիճ զաւակ մէկէն ֆոդը արիրնէ, չէնէ՞մի իտա ճունապէթ, խղդանճ էղածէդ չէր, հա՞. մախսումներուն շունի պէսնակ պան անելու տուիր ու, եաքն ալ, եփօր պէթէր հիւրնդցանն է, օրնաւոր հէքիմներուն էրեսն ալ չ՝ցուցուցիր, որ իտա թերմաշ ստակէտ մէկ

քիչմը չ՝պակսեցունուս տէյին... Ալլայը իտա խրզդանճ էղածիդ համար է, ալլա՛յը։ Մի՛ վախենալ, պայած օսկիներդ հետդ ուզենասնէ եալ տանելու՝ էկնէ կարնալու չիս, մեռնելէդ վերջը ալլայրն ալ կէօռպակէօռ կ՝լայ կէրթայ...

—Հաձէ Կարապետ, զէվզէ՛կ, ախռ փարային խաթռը տուն յաւիտեանս յաւիտենից կիտնալու չիս, չիդտիս ալ. անպէս անիմնէ՝ չօխթան էտևս պաց մնացած էր... Զէ, ճանրս, իտա խրատներդ քեզի պայէ։

Ու Մելքօն աղան՝ սիրտը էլլած, ինքը իրեն «վեցկիր» կուտար ու խաւէյէն տուս կէլլէր։

Ան Մելքօն ադայլին տունին մէջի էղած պաները էկէր, ճանրս, մէմէկ ասելու լ՝ամնէ, կարդացող, քուկուդ ալ կուլխուդ մաղերը թիմթիկ պիտ կայնին, իմիսն ալ... Զատալը կնիկը, յիցուն-վացուն տարեկան ալ էկած կնիմարդ՝ լ՝արնէ եալ, կէնէ՝ հրաման չունէր տունէն տուս էլլելու առանց էրկանը իրաւունքին ու օտար էրիմարդու հետը կալանի անելու. ան աղջիկները ասիսնէ՝ մախսումները մէկ օրմը խունտում օր տեսած չին։ Մելքօն աղան նացա տասնրհինգ օրը մեմը տունէն տուս կրհանէ, ան ալ մէկ սահաթէն աւելի իրաւունք չունին քալելու. էկէր մէկ պարեկամ

աղամը հանարպեցաւ ու մէկէրկու չիվթ կալանի արին տա՞, տուն էկածներովն ալ անէր, անսահաթը կրպաշլայէր հարց ու փորձ անելու. տահա չ'լարնէ—զաւալը խղմէթքեար աղջիկանը համար պայած խամչին մինտարին տակէն մէյտան կհանէր ու «տինրնը ֆելան էպդիկրմը խղլառը» ասելէն, վտե՛խդ կ'ըկեռայ, կրպաշլայէր աղջիկներուն ծեծելու: Կնիկը եա աղաքը հիչ հրաման չունէին իտա ատեն էրկու չիվթ կալանի ասելու, չէնէ, կիտէին, խամչիին մէկալ ծարը իրենց սէմթը ման պիտ դար..

Եփոր Մելքօն աղան տուն կուգարնէ՝ ան նեսինները ալլայն ալ նարա տիմացը լէփփէյի սուլթանրմ կկայնէին. որը թայեախը ծեռքէն կառնէր, որը քաւթուղը կրկախէր, որն ալ փալ'թօն վրայէն կառնէր: Հօրսուկ էղած լ'արնէ, զաւալը կնիկը ի՛նչ արածը չէր կիտնար՝ կաշէռ չուտիմ տէյին, վաղելէն աշխանա կէրթար կերակուրը հաղիրելու. աղջիկները չինիներ պաներ կրհանէին, աղաքն ալ սթօլը քանէփէյին տիմացը կրքաշէին, ես ի՛նչ կիտնամ, տունին մէջը ալլայն ալ եսիրի պէս ժուռ կելլէին, որ Մելքօն աղային սիրտը ափասատան չ'հանին տէյին: Ամա Մելքօն աղան, ճանրս, էյնէ-խօյնէ կէլլէր քանէփէյին վրան կընստէր:

Ատպէսնակ կ'լար Ասվածային ի՛ր տուած օրը. սապախթան ու իրկուան—չայի ատեն, հօրսուկն ալ—կերակուրի ատեն: Կարճը ասիմ, ճանիկս, Մելքօն աղային ծեռքէն խուլթսուղները ասլը տիրլիք չունէին: Անխարէրին մէկ պան էղիլ էին զաւալները, որ տուս էլլելու, կտորմը թէմիզ հաւա առնելու սիրտ պիլէ մնացած չէր զաւալներուն քովը:

—Սիրտերս սև, լեղուներս կապ, մենք մարդու մէջ ալ լ'անքնէ՝ ի՞նչես ուրախանանք, արցունքները աչքերուն կասէին տայմա աղջիկները:

Հիչ չէ, մէկօրմը իտա աղջիկները չխօթքա կ'լան ու չիչակի պէսնակ կրթոռմին, անկրշտուս ֆօղին վայ կ'լան, կասէի ես...

Ամա ի՞նչ կանիսօր՝ ատ ալլայ ցաժուլթինները անելէն վերջը, Մելքօն աղան պաս հիչ չէր ուտէր, իլլեքի կիրակի սապախթանները ժամ կէրթար, Սուրբ Կեւորգին տիմացը իրեք քափիկնոց մոմ կրվառէր, ծունկ չոքած էրկան պարակ աղօթք կանէր, կաղաչէր Սուրբին, որ բարեխօս լ'այ իրեն սաղուլթը միշտ յաջողուլթին և առողջուլթին տալու, իսկ «մեռնելէս վերջը, կասէր, արքայուլթեան մէկ քօշան, ռահաթ տեղ մը, տահա պաշխա պան չուղիմ» կասէր ու «տէր օղորմեա» ասելէն

ժամէն շիտակ տաճիկի խաւէ կէրթար՝ հոն տաճիկ առխատաշներուն հետը էրկու-իրեք քափիկով քօնչինա եա կռապեօժ խաղալու համար...

Էղաւ որ մէկ օրմը Մելքօն աղան փաթ տէյին ինկաւ ու մեռաւ։ Մէկն ալ, մէկալնալ կասէինօր աղլի մարդուն էճէլը ինքը իրեն էկած չէ, հապա խանութպան Մառթինը Մելքօն աղայէն առած հազար հինդ հարուր մանէթին վէքսիլը մէկէն մէկ խափմիշ արիլ է ծեռքէն ու պատռ-պատռ արիլ է ցքիլ է մարդուն տիմացը։

—Կնա՛ շինտը կուղիսնէ տավա արա, ասիլ է. փռացէնթ առնելէն թամամ հոգիս հանցիր, մարբս լացիր, ասիլ է Մառթինը ու տահա կուղիսնէ Մելքօն աղային էնկսէյէն պռնիլ է ու խանութէն տուս ցքիլ է։

—Իրկունը ուշ ատեն էղիլ է, ճանրմ, իտա պանը, կասէր Խօռոդին Ալէքսանը Կարապետին խաւէյին մէջը. աղէկօր մարդ ռասթ էկած չէ իտա տեղը, չէնէ ան Մառթինին պանը ալայ-մալայ պուրդ պիտ լ'ար. հիչ չէ Մելքօն աղան անսահաթը սուտ փռաշէնի փա-

տավաթ պիտ անէր ու մարդուն տակը վեր պիտ պերէր։

Մահն ալ ասպէս էղիլ է. եփօր մարդը կտեսնէ վէքսիլը Մառթինին ծեռքը կտորկտոր էղած նէ՝ ուռուֆ կ'լայ ու շաշռմիշ արածէն կրժողվէ աղլի թուղթին կտորները ու լեղուն պռնված համանա տուն կէրթայ. առանց մէկին պան ասելու, վէքսիլին կտորները թափ կանէ կրտնէ պարցին տակը ու սուսփուս կրմտնէ տոշակ։ Մէկալում օրը սապախթան կնայինօր Մելքօն աղան ասլը տեղէն չի ժաժկրտիլ. կէրթան քովը կնիկը, որդիքն ու աղջիկները—ի՞նչ տեսնին. մարդը շիփ-շիտակ էղած էրկնցած՝ առանց նէֆէսի պառկիլ է։ Անսահաթը տիրացիններուն կրկանչին, հէքիմ ժան կուտան պան կանին ու վերջը կիմացվի որ՝ էճէլը отъ разрывъ сердца էղիլ է։ Խայխայտէն վերջը, եփօր մեռել լուացողները պարցին տակէն վէքսէլին կտորները կրկուտնունէ՝ համան կրհասկրնան պանին էուրթինը...

—Ատ սոյ մարդուն վերջաբանութինը ատպէս ալ պիտ լ'ար, ասաց խաւէճի Կարապետը խաւէյին մէջը։

—Ի՞նչ ալ լ'անէ—Ասված օղորմէ հոգուն, ասին մէկալունք, մէկ օրմը ալլայրս ալ պիտ մեռնունք...

—Կիսի՞ք ինչպես փառաւոր թաղում պիտ անին Մելքօն աղային համար. մարդուն ինախատար խրդղանչ էղածին կօրա՝ սէմէյսթվան, ճանրս, անխատար՝ ալ ճէմերա է եղիլէ... Կասին՝ քաթաֆալքա, ցինքօվրյ սունտուկ իրեք հարուր մանէթնոց, սքլէփ-պան անել պիտ տան, ասաց կէնէ Խորոզին Ալէքսանը։

—Էկէր իտա մարդը սուտ մեռնէր ու թափ ժամ տարած տաեննները մէմը կօլօխը վերցուներ տեսնէրնէ իրեն իտապէս թաղածները՝ հի՛չ չէ մարդը ուռուֆ պիտ լ՚ար ու ինա թախէին հոգին պիտ տար, ասաց Կարապետը անդիէն։

Մէկալում օրը Մելքօն աղային մեռելը տարին ժամ ու վրան պատարագ արին։

Էփփէյի էրկան պարակ քշից պատարագը. ատ օրը տէրտէրն ալ, տիրացուն ալ խիստ պէթեր ճօշմիշ էղած կրերդէին. ժամին մէջը էփփէյի մարդիկ կային, շատերն ալ էկիլ էին իրենց աչքովը տեսնելու՝ շիտակ է ատ՝ ատ Մելքօն աղային մեռածը, չէնէ չէ տէյին...

Ժամուորներուն մէջը կար մէքամ տաճիկ ալ, որ սատէ նես կըմտնէր ու տուս կէլլէր. մեմալ նայիս աղլի տաճիկը կնաց մէքամ յիցուն քափիկնոց պալապան մոմ առաւ ու պե-

ПОЧВ... № ... ЮЗЕФ ПЕНИГ

4841-2010

րից Մելքօն աղային կուլխուն տակը տնկից։ Ալլայս ալ շաշմիշ էղած կնայէինք մարդուն վրան։ Եփօր մարդը ժամէն տուս էլլաւնէ, ես անսահմանը կնացի էտեւէն ու հարցուցի ինչու համար էր իտա մոմ վառածը տէյին։

—Հա՛յ-հա՛յ, Մելքօն աղա, ասաց տաճիկը ժամին տուռին սէմը նայելէն,—մեռնելը հիչ միտքդ չէր պերէիր... Ես քեզի հաւատացի, հազար մանէթիդ վէքսիլը չառած՝ ստակդ ետ տառցուցի ու, տուն չամուշցած էկար նորէն առիր իտա հազար մանէթը։ Տուն Ասված չունէի՞ր... Սա մոմը, Մելքօն աղա, ես պէտք է սա՛ղ ատենդ քեզի խրկէի, ամա հիւանդ չ՚պառկեցար ու, ի՛նչ անիմ... Էյ, Ասված... ան հազար մանէթը թաղումիդ թամամ պիտ օգտէ, ասաց տաճիկը ու ժամին աղպարէն տուս էլլաւ։

Ես շաշմիշ էղած կեցիլ էի. իտա տէրը անկաճիս լացի ծան էկաւնէ, համանա նես կնացի։

Պատարագը արդէն վերջացիլ էր. տէրտէրն ու տիրացուն պաշլայիլ էին շարականները ասելու։ Նացա աղօթքը անոր համար էրօր, իտա Մելքօն աղային՝ անմեղ ու արդար մարդու պէսնակ՝ հրէշտակները տանէին արքայութին մտցունէին... «Անտեղը վերին Երուսաղէմին մէջը—ասված էր աղօթքին մէջը,

ՀԱՅԿ-ՍՍՌ Ա.

—Հրեշտակներուն կեցած տեղը, վտեխօր սուրբ Ենօքն ու Էղիան աղաւենիքի պէս՝ եղէմական դրախտին մէջը ծերացիլ ին, պայծառանալու արժանի էղիլ իննէ, կասէր, անպէս ալ օղորմէ քու Մելքօն ծառային» ու տար նարա Հայր Աբրահամին Գօդը ցրքէ, կասէին վերջը տէրտէրն ու տիրացուն...

Իտա Թախէյին, ճանրս, միաքս ինկաւ մեքամ չափին վարդապետի «Իվերին Երուսաղէմ»-ը, որ ասիլ էր Մելքօն աղային պէսնակ մարդուն սունտուկին վրան։ «Իվերին Երուսաղէմ, կասէր վարդապետը, ի ընակարանս դիւականաց, ուր լիրբ Մարկոս ու չար Պետրոս կան տապակուած ադռաւապէս, ի մէջ Թաւային դժոխական, ողորմած տէր, չողորմեա այս կէօռպակէօռ ննջեցելոյս»... Մեր տէրտէրն ալ էկէր սա պանը երդած լար Մելքօն աղային մեռելին վրանն է, ամապա շիտակը ասած չէ՞ր 'լար, Թիւշինմիշ կ'լայի ես։ Ա՛սքան, ճանրս, ցաժութին անել սաղութը, ասքան մարդ դրկել, կէնճ դաւակներուն տանճելէն, փալաչի պէս, դերեզման խօթել, սաղ մնացողներուն ալ հոգիները պերանները պերել, Քրիստոսին տուած պատուիրանքները ոտքի տակ առնել, սուտ քրիստոնեայ 'լալ... ու ատ ալլայը սաղութը անելէն վերջը, ատպէս մարդուն մեռած ատենն ալ

կէնէ Աստուծուն աղօթք անել օր՝ խաւուր առջև արքայութենին տուռերը պանայ տէյլին, —ասվածդ սիրիս, սա խաբեբայութին ու աւազակութին չէնէ, ի՞նչ է հապա...

Մեռելին սունդուկը տարին դերեզմանին քովը տրին։ «Ցերուսաղէմ քաղաք վերին, յորում արդարքն ժողովին», էկաւ տէրտէրին ծանը անկաճիս...

Մելքօն աղային Թաղեցին։

Շթէ՛ քեզի. մէկ քանի հարուր տէսէթին հողէն, չորս-հինգ հատ մեծ մեծ պաղերէն ու մէկ քանի հարուր հաղար մանէթէն չ'քշտացող մարդուն աչքը մէկէն մէկ քշտացուց ճեմը իրեք առշիննոց կէտինը...

Տէրտէրին «անշարժ եղիցի» ասած ու դերեզմանին վրան խաչակնքածն ալ անէր, կիտիսքի ալլայիս ալ սիրտին վրայէն մեքամ ծանտռ պան վար ինկաւ ու մենք Թեթևցանք...

Թաղումէն մէկ քանի ամիս անցած-չանցած, աղլի Մելքօն աղային կնկանն ալ, տղոցն ալ էրեսներուն կունը էկաւ, ալլայն ալ խունտումէրես՝ ե՛փ ուղանային քալելու կէլլէին, սիրտերուն ուղացածին պէսնակ կը հագվէին, մէկ խօսքով, ճանրս, տեսնողը Թամին պիտ

անէրքի՝ աճապ ասուն՝ նորմրտէ՞ն աշխարք էկիլին ակչին։

Տարին նոր անցել էր. Մելքոն աղալին մէկ ատենվան նամլը անունը շինար իշող ալ մնացած չէ՝ էկեր իմիս սա կրածս համբելու չ'լաքն է...

II

ԱՆԴԻԻ ԱՇԽԱՐՔԸ

(Ըստ Գ. Սունդուկեանի)

Ան տեղը, ճանրս, ամպէս մէքատիկ զընտան է որ, ի՛նչ ֆէնէռով, ի՛նչ ալ չրախով միւնքին է պան տեսնելու։ Պաղի-պաղի կեանին տակէն փուֆ-փուֆ վեր կելլէին կարմիր ու մուխոտ ալէֆներուն սուր-սուր լեզուները ու իտա ատենն ալ՝ թախէին մէջը՝ կերևային շուքի պէսնակ մէկ թալայ սև-սև հոդիներ ու վար կերթային։ Ալէֆէն վերջը ամեն տեղ ալ սուսուլթին կինչնէր, ծան ծուն ասած պանդ ամենևին չէր լսվէր, կիտիսքի չորս քովդ գերեզման է, տահապախշա պան չ'կայ. ամա օրթալրխի իտա սուսուլթինի ատեն աղլի զնտանին սէմթէն ամպէս մէքատիկ ինիլթիի, լացի-կոծի ծաներ կ'լսվէին օր՝ մարդու սիտր ու հոդին թէմիզ ախթար կիւնտէր կանէր կրցրզէր...

—Մելքոն աղա՜ն... Մելքոն աղա՜ն... մե՞րն է, մե՞ր... քամիին ուվուլթիին պէսնակ մանմը կուգար հեռուէն։

Իտա թախէյին փուֆ-փուֆ էրկու ժուամի վեր-վեր թապլից կէտինին տակէն կրակը ու ալէֆին հետ պարապար տուս թապլվեցան մէկ թալայ մանտռ ու խոշոր սատանաներ ու մութին մէջէն.

«Ինչ ալ 'լանէ էկար մեզի,
Մելքոն աղա՛, Մելքոն աղա...
Քեզի շատունց կը սպասէինք.
Ինչ ալ 'լանէ էկար մեզի»...

ասելէն, պերին մէկ պան մը ցրգեցին օրթալրխը և պաշլայեցին ուրը աղլի պանին փէշէն քաշելու, ուրը վրան էլլելու, ուրն ալ վրայէն աթլա տալու։

—Հաժէ՛, սա վռե՞խն իմ ես... չինկանայի չալա՞շ է, ինչ պապայիս ցաւն է, ալայն ալ սիփ-սև սիփ-սև... հաժէ՛, վռե՞խն իմ ես, ասի՛ք է, շունշանորդի չափիրն շանլակոտներ, վռեխն իմ ե՛ս, կանչվռտելէն՝ աղլի վար ինկած պանը ու տեղէն կամաց կամաց էլլելէն պաշլայից չորս դին նայելու։

Իտա վո՞վ 'լայ աղէկ.—աղլի Մելքոն աղան, իրեն եղոտ ու աղտոտ եախայով լէթնիյ փալ'թօն հագած, արևէն արդրիս կափ-կանանչ էղած քառթուղին քաղիռօքը անկաճին սէմթը քաշած՝ ահի ու տոզի մէջ կայնիլ էր խուլթսուղը։ Հա՜յ մարբա լամ, աս ի՞նչ ես էղաւ որ աղլի մեր քիրիստոնեայ, պաս չուտող ու աղօթասէր Մելքոն աղան մէկէն մէկ սատանաներուն ծեռքը ինկաւ...

—Հէ՛յ, հովարտա չինկանանե՛ր, վաղ գաքնէ. ի՞նչ կուզիք ինձիմէն. քափիկ չ'կայ քովս... վաղը կուտամ, պէ՛...

Ամա խայիր կանէ՞. սատանաները մանտռ խոշոր, ալասախլասն, ամպէս մէքատիկ ալլայը մէկէն փաթթիլլին զաւալրյին չորս քովն ու չ'լսված ծաներ կ'հանին օր՝ մարդուն հա՜յ-հա՜յ սիրտը փորը պիտ ցրգին։

—Սա վռե՞խն իմ ես, ճանրմ. Ռէհեէպին նալպանտ խանո՞ւթն իմ, ի՛նչ է... աս ի՛նչ ֆաթաժանի ու ծութի հոտ է... պէլայա խալտրխ հէ՛յ, ասելէն մանդուքար Մելքոն աղան կայնած տեղը։

Իտա խօսքերը պերանէն հանած-չհանած, մեմալ նայիս կէտինին տակէն ամպէս մէքատիկ ալէֆ տուս թապլից ու մէջէն ալ թօփ-թօփ սատանաներ թափեցուց Մելքոն աղային վրան օր՝ քիչ մընաց զաւալրյին ուռուֆը պիտ վերնար ու մէկէն մէկ լեղին պիտ պատռէր պիտ էրթար։ Մելքոն աղան պաղած-պուղլա-

միշ էղած կայնիլ էր, սատանաներն ալ, ասված պէլաները տա, որը օմրդին վրան կէլլէր, որը պաճախին առալխէն վաղելէն կանցնէր, որն ալ կռնակը կ'հեծնէր, ան մէկալունք ալ մարդուն չորս քովը փաթթած՝ փաթռ-փաթռ թանց կ'զարնէին խնտալէն ու չափ զարնելէն:

Ատ ալլայը Մելքօն աղան կը տեսնէր, զաւալլային տապաններն ալ խրդղրն կեռինին վրան խաւուռմիշ կ'լար, ամա խութսուղը տահա չիքտէր իրեն վտե՛խ պերածները...

Եփօր թանցը վերջացաւնէ, չորս հատիկ կարճ պոյով սատանաներ պռնեցին Մելքօն աղային թեւերէն ու պաշլայեցին մարդուն ասդին-անդին ման պերելու: Մեմալ նայիս Մելքօն աղան մէկէն մէկ սփթռլմիշ էղաւ տացա ծեռքէն ու վախեցածէն էղած ուժովը կանչեց.

—Աղբարնե՛ր, ի՞նչ կուզիք ինծիմէն. ասի՛ք է, ես ալ իմանամ... Թի՛ւ, նահլէ՛թ չար սատանա, ի՛նչ կասեմ ես ալ. որ սոլ սէմթս ին օր աղբարներ կասիմ տացա...

Ասածն ալ անէր, սատանաները պալլայեցին վեր-վեր ցատքըտելու ու կանչելու.

—Աղբար ի՞նք, աղբ որ ի՞նք, աղբարի՞նք...

Ալէֆ էլլած տեղէն պախշա սատանաներ ալ տէ՛ կէլլէին, տէ՛ վար կինջնէին ու ալլայը մէկ պերան կը կանչէին.

—Աղբար ի՞նք, աղբար ի՞նք, աղբար ի՞նք...

—Ես ծեր մարը մեռելը ֆելան անիմ, ես ծեր պապաներուն օխթը պորտը... ես ծեր ծնողը... շունշանորդի չինկանա քիռիլօսներ, հովարտա ժուլիքներ... шарлатаны, вы, подлецы... տինրնը եանտրդրմը փեղևէնկը... հը՛... ինչ՞ս աղբար կ'լանք մենք, հէ՞, արուն քրտինք պաթած պաշլայիլ էր Մելքօն աղան իրեն հաեը...

Իտա թախէլին մեքամ մեծ ծակ պացվեցաւ Մելքօն աղային առջևը, ալէֆն ալ փուֆ-փուֆ էրկու ժում էաևէտաևի տուս թապլվեցաւ ու մէջէն օխլօվի պէսնակ շիփ-շիտակ տուս էլլաւ մեծ սատանան, կրակի կուն ուռպաներ հագած, ծեռքը մեքամ կրակէ էրկան սիւնկի պռնած, էկաւ ու կայնեցաւ Մելքօն աղային թաքի տիմացը: Զաւալը մարդուն կովտան՝ պաղնիք մտածի պէս՝ տէ՛ թամթաց կ'լար, տէ՛՝ օրթալըխին կրակ ու ալէֆէն՝ չիփ-չոր կ'լար կրմնար:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Աղբար չինք ու ի՞նչ ինք հապա, Մելքօն աղա. կիտցած 'լաս, ասկից վերջը ալլայս ալ մէկ պիտ ապրինք:

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ (տաքէն ու ժուԹին հոտէն նեղանալէն)

Հէյ, սէրսէմնե՛ր, խեցի՞լ իք ալլայտ ալ, ինչ պապայիս ցաւը էղել իք. ինչո՞ւ ժեղի հետ պիտ ապրիմ էղել է. կիտիք օր խելքս հացի ու պանիրի հե՞տը կերիլ իմ, ի՛նչ է, հա՞։ Անխատար մուլքերս ու օսկիներս մէկդի ցրդած՝ պիտ գամ ու ժեղի հետ պիտ ապրիմ էղել է... տեսա՞ր տուն կերած ապուրը. խելքիդ չանախը անիժիմ, խառամա՛ն աիւեի...

Ատ տեղը սատանաները կը պաշլային մէկ պերան խնտալու։

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Ինչ օսկի՞, ինչ մո՞ւլք, ինչեր կասիս տուն, Մելքօն աղա՞. ասկից եաքը տուն մերն իս, մենք քուկուտը. օսկիդ ալ մենք կ'լանք ու մուլքտ ալ, հիչ ատոր համար խասևէթ մի՛ անիլ։

Պատիկ սատանաները նորէն կԹապլըվին Մելքօն աղային վրան ու էրկու հատը կնըստին մարդուն օմզներուն վրան.

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ (էրեսը խաչ հանելէն)

Մեղա՞ Աստու, մեղայ...

Աստու ժանը լսելուն պէս՝ սատանաները Թախէլին մէջը վար կը Թափվին։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Կորսվեցէ՛ք անդին, շուն շան որդիներ. շի՛նար ես ժեր օխԹը պորտը, հա՞... (մեծ սատանային) ինժի՛ նայէ. իտա ինչե՞ս կ'լայ որ, ճանրմ, ասկից եաքէն մուլքս ալ, օսկիս ալ տուք կ'լաք. հասկցունուսնէ նայիմ։

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Հապա ի՞նչ կիտէիր։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Ինչո՞ւ. ասի՛սնէ։

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Անոր համար օր շինար տուն մեռած իս ու մեղքերուդ համար՝ դժոխք էկիլ իս...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Մեռիլ ի՞մ...

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Հապա՞. շինար մենք դժոխքին Թէփէն ինք ու, Մելքօն աղա...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ (լալէն)

Մեռիլ ի՞մ... վոե՛խ մնացիք տուք իմիս

կափ-կանանչ պաղ ու պախչաներրս. վտե՛խ մնացիք տոպռայով օսկինե՞րս, կե՞ղս ու առնելիք օնլամաներս... վա՜յ ինձի, վա՜յ ինձի... տուն ալ ի՞նչ էղար աճապ, Թուշինքա...

Մելքօն աղան ատպէսնակ էփիէյի ատեն լալէն եաքը, կրհանէ մէկէն մէկ կարմիր քայմայով եալբխը ճէպկէն, կրսրբէ աչքերուն արցունքը ու սիրար էլլած՝ կ'պաշլայէ կանչելու իրեն վրան խնտացող սատանային վրան։

—Շուշանորդիներ, եա՛ սէրսէմ իք, եա ինձի խեւցունելու կուզիք. մեռած 'լային է, կրկարնա՜յի շինար ժեղի հետ պարապար կալաճի անելու. կալաճի կանիմ ո՞ւ, հաժէ՛...

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Կալաճի անողը՝ ան արդրէս տուն չիս։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Հաժէ սէրսէ՛մ, ես չիմ, հապա վո՞վ է. սա Մելքօն աղան ես չի՞մ, խելքդ կլօխդ ժողվիան է, շաշխրն...

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ (խնտալէն)

Հա՛, հա՛, հա՛, հա՛... Մելքօն աղային հոգին իս, հոգի՞ն...

Ատոր լսեց դաւալը Մելքօն աղան, խելքը

խաղցուցածի պէսնակ, պաշլայից ասդին անդին իննելու, կլօխը ո՛ր քարին, ո՛ր պատին զարկածը չ'կիտնալէն։

—Վա՜յ կուլխուս, ու հաղար վա՛յ թէփիէյիս. տահա նոր կիմանամ, որ տիմացիսը աղլի սև պորտերէն է... Пропалъ Մելքօն աղա, капутъ!.. (տառնալէն սատանային) հաժէ՛, ճերմակ 'լայ էրեսդ, անպէսէնէ մեր քաղաքը մեմա՜լ տեսնելու չի՞մ... կե՞ղս, տունս-տե՞ղս, հապա օսկինե՞րս... օսկինե՞րս, հաժէ՛, օսկինե՞րս...

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Զէ՛, Մելքօն աղա, չէ՛. արդրէս պանդ պուրդ է...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Զէ՞... прощай էսկի խրրրմ. անամրդը հայտատարն, տինրնը ֆէլան էտթիկրմը հէրիֆը...

Ու կցից Մելքօն աղան նորէն լալու։ Եփօր զաւալրյին միտքը կիյնէր դժոխքին թէփէն էղածրնէ՝ մարդուն սիրար ախտար կիւնտէր կ'լար ու ճիկարը կրճրռ կրճրռ կէրէր, խաւուռմիշ կ'լար։

—Մա՜խ, կինմարդ, Թուշինքա, աճապ ի՞նչ արիր օսկիներս... հա՛յ վախ, հա՛յ վախ...

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Կուզի՞ս տեսնելու կնկանդ ինչ արաժը։ Նայէ՛ մեմը էտեղ։

Մելքօն աղան ման էկաժնալ անէր-ի՞նչ տեսնէ աղէկ. զալին օրթան սթօլօվօյին էրկան սթօլին վրան տրաժ մեռելին սունդուկին մէջը էրկնցաժ պառկիլ է. իրեն մեռելը. սթօլին չորս քովն ալ՝ սևերով փաթթվաժ շարվիլ ին կընիկը ու տղաքը. անկից քիչ մը անդին, աթոռքներուն վրան նստիլ էին պախշա մարդիք ալ։ Իսա ատենը նես կըմտնէ Մելքօն աղային զուդվոր ճիճան ու մեռելին մօտիկնալէն կ՚պաշլայէ լալու ու կովասանքներ տալու։

—Հայ վախ, հայ վախ, Մելքո՞ն, ինձի ինչու՞ ցըդեցիր ու կնացի՞ր... քեզիմէն առաջ ես պէտք է էրթայի, տուն կնացիր ու ինձի թերմաշ ցըդեցի՞ր... հայ մէտէթ, հայ մէտէթ, Մելքօնըս, աղբարըս... մէմը ժանրդ լսէի ու ետքէն մեռնէի, Մելքօնըս, աղբարըս...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Հոս իմ, հոս, ճիճա, հոս ի՞մ... շատ կրփեսրուտիս մաղերդ, համա մէկ պան ալ խայիր չ՚անիլ, մէ՛կ պան ալ...

ՃԻՃԱՆ (լալէն)

Լանքիդ ու էրկնքիդ մեռնիմ, Մելքօն սիրականս...

Ժամասէր ու Ասվածապաշտ հոդուդ մեռնիմ, սիրական աղբարս...

Հրէշտակներուն հետը արքայութին էրթաս, սիրականս, ճիկարս...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Մեմը սիվոնց ալ հարցուր, նայէ ի՞նչ կասին քեզի...

ՃԻՃԱՆ (լալէն)

Վա՜յ, վա՜յ,—վա՜յ, վա՜յ, վա՛յ... Լուսի մէջ պառկիս ու ինձի ալ քովդ առնիս, սիրական Մելքօնս... հայ վա՜խ, հայ վա՜խ...

Զալին մէջը ժողրտվաժ կինիմարդիքը ալ լայն ալ կպաշլային օգուտեմիշ անելու. աղջիկներուն սիրտը կանցնի... Մելքօն աղան ալ կհանէ կարմիր քայմայով եալրխը ու կրկցէ աչքերը սրբելու։ Իսայ Թախէյին ալ տեսարանը ծածկվեցաւ ու զալը, մեռելին սունդուկը պանը ալլայը մէկէն մէկ եօխ էղաւ կնաց։

Մելքօն աղան եալրխը աչքերէն վար առաձն ալ անէր, տեսարանին տեղը ալէֆէ սթօլպներ տեսաւ ու վախէն վուղից սատանային

քովը ու պաշլայից աղաչելու, որ մեմալ ցուցունէ իրեն տունը տեղը։ Ամա սատանան կցից խապա ծանով խնտալու։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ (իւմռուխով սիրտին զարնելէն ու լալէն)

Վա՜յ ինծի, վա՜յ ինծի, վա՜յ ինծի...

Էրկան պարակ լալէն վերջը, Մելքօն աղան պաշլայից հաղալու։

—Հաճէ՛, հայհայ պիտ խրդրվիմ սիտեղը. աս ինչես պան է աս. Ֆաթաժանի ու քուքուրթի հոտը պողազս արդրիս կսխմէ... Ա՛յ ես քու հնճարոդին հոգին ու հաւատը ֆելան անիմ...

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ (խնտալէն սատէ)

Զարար չունի՛, Մելքօն աղա, ալշմիշ կ'լաս...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Հաճէ՛, ինչե՞ս ալշմիշ 'լամ, պիտ խրդրվիմ ու...

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Ինչե՞ր կասիս, Մելքօն աղա, աս մենք տահա դժոխքին թէփէն ինք ու. էկէր վար էրթասնէ, հոն ի՞նչ պիտ ասիս հապա...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Հոն հոսէ՞ն ալ պէթէր է։

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Ատ ալ խօսք է. պէթէ՞ր... Արի՛ մեմը նայէ տա՜։

Ասաց սատանան ու Մելքօն ու աղային թեւէն քաշելէն տարաւ մեքամ մեծ փոս ցուցուցօր, մէջէն սատէ ալէֆներ տուս կէլլէր։ Մելքօն աղան խիստ պէթէր սասանած՝ ետ քաշվեցաւ։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

«Դիր, տէր, պահապան աչաց իմ»... Աս ինչե՛ր տեսայ, օղորմած Ասված, Շթէ՛ քեզի դժոխք... հայ մէտէթ, հայ մէտէթ... վա՞խնիք տուք իմիս խութուռիս կափ-կանանչ պաղպախչանե՞ր...

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Ատ տեսածներդ տահա ի՞նչ պիտ 'լա որ, Մելքօն աղա. տուն նայէ վերջը տահա ինչե՞ր պիտ տեսնուս. это еще цвѣтики, а то будутъ и ягодки...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ (աղաչելէն)

Ինչ կուզիս տամ, թէք ինծի խալսեցուցնուք սա տեղէն։

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ (սև սև ակռաները ցուցնելէն)

Ի՞նչ պիտ տաս. ոաքէդ ինչվանքի կլօխդ մերն իս ու. ի՞նչ պիտ կարնաս տալու։ Սաղ աշխարքի օսկին ալ, արժաթն ալ ալլայն ալ մերն է ու մերը։ Մելքօն աղա, տուն շատ մի՛ վախենալ, մենք քեզի, ճանրո, խիստ չարչարանք—տանճանքներ չինք տալ...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Հապա իմիս պատիժս ի՞նչ պիտ 'լայ, ասիսնէ միմը, ճանիկս։

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Ատոր ուշէնին, ճանրս, Սաթայէլը պէտք է անէ։ Ամա կէնէ կէնէ, իմիս կիտցածովս, մեծ-մեծ նաբաղանիներ պէտ չին տան։ Շատ շատ՝ մեմը սիֆթէ, на починъ, մէկէրկու տապրա ալէֆլէմիշ էղած կրակին մէջը կրցդին քեզի, անկից էտև՝ մէկ էրկու տապրա եալ խայնար խայնար ժուրթի խալկինին մէջը կը խօթին...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Անպէսէնէ՝ մարբս լացիք ու... հա՞մա քիչ է էղիլ է։ Հածէ շաշխրն, ատպէս անիքն է կմեռնիմ տա։

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Ինչե՞ր կասիս, Մելքօն աղա, հոդին կ՛մեռնի՞. հոդին անմահ է ու...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Խօրթօր, հապա։ Զէ՛, աղբար, պանս տիպինեմէս պուրդ է։ Է՛յ, ատկից ալ պախշա պատիժներ կայ։

Մարդը կալաճի կանէ, ամա քուքուրթին ու ժուրթին հոտէն ալ հայհայ պիտ խրդրվի հէրիֆը։

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Հապա չ՛կա՞յ. մեմը հոս արի նայէ։

Ու սատանան Մելքօն-աղային նորէն մէկ պախշա տեղ տարաւ ու մեքամ խորունկ փոսին մէջը նայելու տուից։ Իտա ատենը ամպէս մեքատիկ ալէֆներ փաթլաթմիշ անելէն տուս թապլից օր սիփ-սև սատանային մէկատը, քիչ մնաց զաւալը մարդուն նես քաշէր։ Մելքօն-աղան փոսին մէջի պանները տեսածովը, հէ-

րիֆը մէմը չառփուն-սուռփուն կնաց ու փաթ արաւ ինկաւ վար՝ սիրաը անցածի պէսնակ։ Սատանաներուն թամամ թաւէր. որը վրայէն թալխա կուտար, որը ուռնա-սուռնա վրան կիններ, ո՛րն ալ վեր վեր կցատրբատէր ու մարդուն փայլթոյին փէշերէն կրքաշէր։ Քիչ մը անդին՝ կամաց կամաց Մելքօն աղային խելքը կլօխը էկաւ ու տողտրդալէն ասաց.

—Ա՛ս ինչ՞ը տեսայ ես, Սուփ Կևորդ, տո՛ւն բարեխսս... Տևե՞ր, տասվերկու կլօխով օձե՞ր, կրա՞կ, ալէֆի տալդա՞... վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ... Խալկինով ժութը տրած—խայնամիշ կ'լայ որ, ի՞նչ կ'լայ. ան մարտիքը ասիսն է՝ կառաւիթի պէսնակ կ'խաշվին օր, ի՞նչ կ'խաշվին... հոս նայէ, հաժէ՛, իտա կրակին ասա, քիչ մը անտին թո էրթայ...

Փոսին վրայէն սատանան ատլա տուաժն ալ անէր, կրակը համանա մարեցաւ։

—Խալկինին չորս քովը ան շունշանորդի սատանաները ժողրավիլ ին, ծեռքերը կրակէ քէվկիրները պռնած՝ խալկինէն թէկարան տուս էլլիմ ասոդին կլօխին ամպէս մէքատիկ պա՞ս կանին կզարնին օր՝ հերիֆը ժութին մէջը եօխ կ'լայ կէրթայ... Ան ի՞նչ խատար սատանաներ, ան ի՞նչ խատար մարդիկ. հաժէ՛, թառան ժուկի պէսնակ վրայ վրայի շարիլին պէքիմ մէկ

միլիոնատիկ մարդ ու տակէն ալ կրակը ամպէս մէքատիկ չաթռատամիշ անելէն կվառին օր, հերիֆներուն տակը վեր կ'պերին, կիտիսքի խառախուռսաղ աղային Քէրանային պէսնակ՝ քիրէմիթ, ետ չէնէ թուլա պիտ խորթին... Մարրտ 'լամ, ասպէս ալ պան... Ան մէկալ սէմթն ալ հարուր հազար վեռանոց խալկինին մէջը խուռշին կէփին ու արալրխտա ո՛րին պէրանը կուլլուն, ո՛րին անկաճը, ո՛րին ալ փորին մէջը... Լեզուլով պատմելու պան չէ, հի՛չ հի՛չ... Էկէր մարդիք՝ մեռնելէ ետքը իսա պանին էղաժը իմանան ալ, Ասվածուկայ որ մեղք ասած պանդ հիչ հիչ անելու չին։

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Նայէ՛ տուն ալ շթէ, Մելքօն աղա, էկէր մէկտօրիկ խելօք չ'կեցար իսկ, անսահաթը քեզի եալ իտա տեղը կտանինք։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Զարէ՞ս ինչ. խելօք չկենամ—ի՞նչ պիտ անիմ. հաժէ, ինքրտ ալ քովս թիթիզ ժանտառմի պէսնակ կայնիլիս ո՞ւ։ Ան չէ ամա, սիտեղը ալլեմ բարեկամ մարդիկ շատ կան ինծի. մեմը աղէկ նայիմ-չի... Զօռչօփին, Կիրակոսը հոս է էղիլ է, հաժէ... Կիրակոս Ֆիլի-

փիչ, հաձէ Կիրակոս Ֆիլիփիչ, տուն հոս ինչ պան ունիս, другъ! товарищъ!..

ԿԻՐԱԿՈՍԻՆ (ժանը դժոխքին մէջէն).

Պարով էկիլիս, Մելքոն Սարգիսիչ, օղռ ալլայ. ես քեզի շատունց կսպասէի...

ՄԵԼՔՈՆ ԱՂԱՆ (քիչ մը սիրտը էլլելէն)

Տահա խուենաձում ալ կ'լաս էկաձիս, ի՞նչ է, հա՜. պարէմ էրկու աչքս ալ քօռանար, որ քուկուդ իտա չինկանայի էրեսդ չ'տեսնէի։ Ամա՝ ես ալ կիտէի, որ քեզի պէսնակ կող, եարամաղ, հոտած շունին տեղը թամամ իտանը էղաձը. պարով վայլիս...

ԿԻՐԱԿՈՍ

Զինկանայէ հալ էղաձրդ ինքդ չիքտի՞ս զայիր, ախմախ ճինապէթ...

Տահա խօսքերը օրնաւոր վերջացուցած չէր զաւալը մարդը, մեմալ նայիս խոշոր սատանային մէքատը շէրէփը իլինքցուց խայնարխայնար խուռշինով ու շոռ տէյին լցից մարդուն պերանը։

ՄԵԼՔՈՆ ԱՂԱՆ (սատէ փոսին մէջը նայելէն)

Հաձէ՛, Ակոփ աղա՜ս ալ հոս է, ինչ է. զաւալը չոռպաճիս... Աղա՛, աղա՛, ի՞նչ հալի իս իտա տեղը։

ԱԿՈՓ ԱՂԱՅԻՆ ժանը նեսէն

Ամա՜ն, Մելքոն, հալրս խարապ է, խարա՜պ... Մէկալ աշխրքին մէջը չարաձ պանէրս չ'մնայ. սուտ ալ ասինք, մարդ ալ զրկեցինք, ան թերմաշ խանութն ալ ախռ էրկուսս մէկ էղանք էրեցինք... Խալպ էինք, խա՜լպ, Մելքոն... Կերի՞մ, կրմրկվի՞մ, ամա մէկ թիքալ ճուր տուող չի կայ...

ՄԵԼՔՈՆ ԱՂԱՆ

Հայ մէտէթ, հայ մէտէթ... վաՀ՞խ մնացին մեր խանթարին չէշմէյին սալխրն սալխրն ճուրերը... (Նորէն կնայէ) Հայ մարրտ 'լամ, աղլի կռձոլոտ ու չինկանայի սուռաթով Մայտիռոսովն ալ հոս է էղիլ է. հապա աղէ՞կ էր ժամի ու վաձատունի ստակները լոփ-լոփ ուտելը. շի՞շ մանէր պօղազտ, ժականք շուն... հախն է շունշանորդիին. քէշքէմ տահա պէթէր տեղ խրկաձ 'լային... Զիպի՞ր, զիպի՞ր, ատպէսնակ եարամաղներուն...

Եփոր Մելքոն ագան, ճանրս, իրեն «բարեկամներուն» մէմէկ-մէմէկ կրտեսնէրնէ՝ ասաձ-չասաձը չէր կիտնար, զէրէ աս աշխրքին մէջը

ալլայն ալ զթընա կնացիլ ին Մելքօն աղային հետը։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Հաժ է Գիրքոր, *) ոռուն ալ հոսիս։

ԳԻՐՔՈՐԻՆ ԾԱՆԸ

Մոհրուէր չանկաթ, Մելքօն աղա, ու չհասնէի՛ր ինձի իտա թէրմաշխալաճախ սթօռիադ պատմելու, ինձի թասեր տալու, որ ես ալ ասօրվան օրս քուկուդ կրակովդ չ՚տապկվէի...

Իտա ատէնը սատանային մէքատը չէլէքով խուռշինը պերից ու խայնար խայնար լցից տղին կոլօխէն վար։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ (Գիրքորին)

Հաժէ, եապանի խոզ, կօտշ ճանավար, շինար քեզի կնա ժովը ինկիր ասիննէ, պիտ էրթաս պիտ իշնիս անսահաթը. անիսնէ՝ հայվանիս տա՜, վով է մեղաւորը... վա՛յ, Թառաս Իվանիչ, հաժէ, ոռուն ալ հոս իս։

ԹԱՌԱՍ ԻՎԱՆԻՉԻՆ ԾԱՆԸ (լալէն)

Հոս իմ, ճանրմ Մելքօն, հոս իմ...

*) «Մելքօն աղային սթօռիայի» տելբիանելը —երիտասարդը։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ (սատանային. խիստ սիրտը էլլաժ)

Հաժէ առիսթանթ, փի՛ճ, եառամաղ շուն, շաշխը՛ն սվօլօչ, իտա կողերուն, մարդ մեռցունողներուն, աշխարք զրչողներուն, աւաղակներուն սիտեղը կպերիքնէ, կէնէ կէնէ մէկ պանի ուլմիշ կուգայ, ամա իտա արդա՞ր, խե՞ղճ Թառաս Իվանիչի՞ն ինչու պերիլ իք, փամի՛լուլ, քաղաքին մէջը նարամէն ալ տահա ժամասէր, ասվաժապաշտ, անկից էաև՝ պանը թէքմիլ պայող պախշա մարդ կկրտնէ՞իր ասլը. մարդը փուհամօ արդար է ո՞ւ...

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Անօր համար պերիլինք հոս, որ նա տուսէն իրեն իտպէս արդար ցուցունելէն՝ կրցիլ է մարդոցը աչքերուն թոզ փչելու, ամա տակէն ուրին ասիս խափիլ է ու ղրկիլ է։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Հաժէ, ինչե՞ր կրփրչիս, իտա ես չիքտի՞մ ինչ է։

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Զիս հաւատալնէ, կնա ինքդ հարցուր. թօ ինքը տեղովը ասէ քեզի։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ (կանչելէն)

Թառաս Իվանիչ, Թառաս Իվանիչ, ասիանէ, ճանիկս, տուն մեր քաղաքին մէջը ամենէն շատ աղօթք անող ու պասրտ ալ սթռոկիչ պռնող մարդ չէ՞իր։

ԹԱՌԱՍ ԻՎԱՆԻՉԻՆ ԾԱՆԸ

Պան ալ, աղօթքն ալ շթուքի համար կ'պայէի, որ արած ցաժութիններրս չէրևան տէյին. խաբէյութին, գողութին, սուտ էրթում —շթէ՛ իմիս կլավնիչ փռէտամէթներս...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Հաժէ խօրթ կասիս.

ԹԱՌԱՍ ԻՎԱՆԻՉԻՆ ԾԱՆԸ

Ես խօմ արդրէս հոսիմ. ամա նայինք վռով պիտ կարնայ մեր քաղաքին մէջը առանց խաբելու իրեն գործը լմնցունելու ու ստակ վաստրկելու՝ զէնկննալու համար։ «Ես ասացի ի զարմանալ իմում, կասէ Դաւիթ մարդարէն, թէ ամենայն մարդ սուտ է» կասէ։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Զաւալը Թառաս, վռով թամին կանէր

քեղիմէն... (նորէն կնայէ) Քէրոբն ալ հոս է, ինչ է. Քէրոբ, հաժէ Քէրոբ, տուն ալ հոսիս։

ՔԷՐՈԲԻՆ ԾԱՆԸ

Խարէզութինով անմեղ տեղը զարկի մեռուցի էմճէօղլրյիս ու տունն ալ գիշերով էրեցի։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Անպէսէ նէ՝ հախն է, շունշանորդի։

ՔԷՐՈԲԻՆ ԾԱՆԸ

Քուկուդ արդար կիտցած Թորոս էմճէտ ալ հոսէ ու, ի՞նչ պօպօղամիշ կ'լաս...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ (մէկէն մէկ ուռուֆ էղածի պէսնակ)

Թորոս էմճէ, էմճէ՛, քեզի հապա ինչո՞ւ սիտեղը պերիլ ին... աղքատներուն օղորմութին տուողը տուն չէ՞իր, էմճէ՛։

ԹՈՐՈՍԻՆ ԾԱՆԸ

Հինդ-հինդ մանէթ կուտայի, ամա հարամ ստակ՝ հաղարներով կրկռէի ճեպս։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Իտա ինչեանա՞կ կանէիր օր, հալիբ մէկ պանէ խապէր չէր ունենար։

ԹՈՐՈՍԻՆ ԾԱՆԸ

Մարիֆէթը կիտէի։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Անպէսէնէ- - տուն ալ տեղդ կտիլ իս, պարով վայլիս...

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Մելքօն աղա, ինչո՞ւ ատխատար կզարմանաս. ատպէսնակներ հաղարներով կան աստեղը։ Կուզիսնէ արի՛ մէմէկ-մէմէկ ցուցունիմ քեզի... Հանա Պոչօվին Կարապէտը քեզի. ծեր քաղաքին կոլօվան ալ էղաւ ախռ ու սաղ աշխարքին մէջը Է՛նկ աղէկ անուն ունեցողներէն մէկն էր խօմ. ամա հարցո՛ւր մեմը իրեն, նայէ ինչե՛ր արել է։ Կարապե՛տ Պոչօվ, ասա սիվուր ինչե՛ր արիլ իս։

ԿԱՐԱՊԵՏԻՆ ԾԱՆԸ (նեսէն)

Կոլօվա էղայ ամա, քաղաքին բոլոր կողերուն հետն ալ օրթախ էի. ատպէսով թէզ զէնկնցայ ու եարէն պաշլայեցի ժամի, վաժատունի ստակներ պախշել՝ հալխին աչքին թոզ փչելու համար, որ վերջը տահա զօռպա կողուրթիւններ կարնամ անելու տէյին։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Հա՞ անպէսէնէ—հախն է, փեղէէնկին զաւակը, տանեվէ շունի պէսնակ։

ԿԱՐԱՊԵՏԻՆ ԾԱՆԸ

Ա՛ տանեանքը պան չէ ամա, Մելքօն, արի նայէ որ շուտ մեռաժիս խիստ պէթէր կմեղքնամ, զէրէ քաղաքին մէջը կողնալու պան տահա շատ մնաց ու մէկալ առխատաշներրս առանց ինժի—մէյնակ քէֆ պիտ անին։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Ա՛յ ժակաչք շուն, ա՛յ օպռ խոզ, ա՛յ եառամաղ քէօփէք...

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Տահա ցուցնո՞ւմ... Հանա քեզի Խնծորովը. մարդը ալլային ալ հաւատացուցիլ էր օր ինքը շիտակ պան սիրող դատաւոր է էղիլ է, ամա վոյ որ աւելի ստակ խափթռմիշ անէրնէ՝ նարա սէմթը կքաշէր։—Հանա տաւաներուն վէքիլ ապլքաթ Զարզարդարովը, որն օր հէմ քուկուդ սէմթէդ կուտէր, հէմ իմիս... Հանա, ճանրս ծեր զվեսնը՝ Մղտրսովն ալ, անդիի սէմթը կեցիլ է. կճանչնաս խօմ իտաւուր։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ (շաշմիշ էղած՝ ձեռքերը ծունկերուն կզարնէ)

Մղտրսովը... Մղտրսի աղա՛, Մղտրսի աղա՛, ճամբադ ինչո՞ւ կորուցիլ իս, տուն չէ՞իր իրեք տապրա էրուս սղէմ կնացողը։

ՄՂՏՐՍՈՎԻՆ ԾԱՆԸ

Խօրթ է, իրեք տապրա էրուսաղէմ կնացիլ իմ, ամա աղբարս օր մեռաւնէ, մուլքերուն ու ստակներուն վրան ափեքունը ես էղայ. կնկանը, ա՜որ մանտռ տղոցը զրկեցի ու նացա կպչելու նապլեսսվանթախրմով եսղաւթեցի։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Անպէսէնէ—օխ թօլայ, խիստ աղէկ արիլ ին, որ էտա տեղը պերիլ ին քեզի։

Իտա ատենը կեսինին տակէն տուս էլլաւ մեքամ տեսօք կինիմարդ։

—Ծուն հապա ի՞նչու համար էկիլ իս, մադամ՝, հարցուց Մելքօն աղան։

ԿՆԻԿԸ

Մարդուս կ'խաբէի։

(Սա կինչնի վար, մեքամ պախշան զուքա—խիստ պէթէր չիրքին)

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Հապա տուն ինչու էկիլ իս. տուն ալ, հաքա, մարդուդ կ'խաբէիր։

ՁԻՐՔԻՆ ԿՆԻՄԱՐԴԸ

Ես, ճանրս, հէ՞մ մարդուս կ'խաբէի, հէ՛մ ալ սիրականիս։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Վայ կեսի՛նը մտնիս ու մայրն կրողին տակը էրթաս...

Ձիրքինն ալ տակը կէրթայ, տուս կէլլէ մեքամ խիստ պէթէր տեսօք աղջիկ։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ (զարմանքէն պերանը պաց)

Հաժէ, սա՞ եալ հոս է. հա՜յ մարդ 'լամ։ Ձէնէ՞ տուն ալ մարդուդ կ'խաբէիր, հա՞. ամա կիտիսքի տուն տահա մարդ չունէիր ու...

ԱՂՋԻԿԸ (կոտռավելէն)

Վօթ եշչօ... նէվռէմէնօ պէտք է էրի՞կ ունանալ ինչ, սքաժի՛թե փաժալուլսթա... Ես էրիկ չունէի ամա, մեքամ տղայ ունեցայ ու մախսուսին առանց մեղքնալու, տարի ծովը ցրքեցի՝ կերած մեռաց մարդ չիմանա տէյին.

շԹէ իտաւուր համար ։ ինձի հոս պերաժները, միլօսԹիվը կօսուտառ...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Տէր օղորմած Աստած... Վարիսէ հ սյհայի ատէնը աչքը մուԹ կօխիլ էր ու գալիք վայ-վային վրան միտք անելու ժամանակ չունէ՞իր, հա՞...

ԱՂՋԻԿԸ

ՊուտԹե փավէժլիվէ, մուսի՛ւ... Արաժս ե՛ս կիտիմ, փաժալսԹա... Քեզի տրաժ չին ինժի ուռոքներ տալու. նախալ...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Ա՛յ ճառիզ, ա՛յ օռօսփի, ա՛յ շունի սօյ, տահա սիրտդ ա՞լ կէլլէ...

ԱՂՋԻԿԸ (կոտռատվելէն)

Քուկուդ վրադ նայիսնէ տուն. կռժոլոտ, սԹառըյ չօռԹ, նախալ, նախալ, նախալ... (Մելքօն աղան կվազէ աղջիկանը զարնելու, ամա սատանան ապուլ չի տալ)

ԱՂՋԻԿԸ (սատանային)

Մեռսի՛ զա ուսլուժլիվօսԹ, տա սվիտա-

նիա (կասէ աղջիկը ու reverans անելէն վար կինջնի)։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Վայ ես քուկուդ մարդդ մեռելդ... տինընը ֆէլան էԹրդրմը փիճը... ՇԹէ քեզի պան... շատ պան, չօխ շիյ...

Կէլլէ մեքամ ֆռանԹի պէս հագված, նոր կարգված աղայ մը։

—Տո՛ւն հապա ինչու էկիլիս, չէնէ՞ Թանց պիտ զարնիս իտա տեղը, կհարցունէ Մելքօն աղան։—Մեղքըդ ի՞նչ է։

ՖՌԱՆԹԸ

Ստակի համար մեքամ այլազգի աղջիկ առի ու վերջն ալ պաշլայեցի փաԹռ-փաԹռ ժեժելու, ինչվանքի օսկօռն ու կաշին մնացն է...

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Կլօխէդ մեժ... կերիլ իս, ախմախ փեղե-ւէնկ. քեզի վով ասաց ստակի համար չ՝սիրաժ աղջիկդ առ տէյին. կօռէլ...

(աղան վար կինջնի)։

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Տահա ցուցունի՞մ։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ

Էղաւ, չուզիմ, թամամ կլօխս հոտեցուցիր... Շթէ՛ քեզի դժոխք, շթէ՛ քեզի մեղաւորներ. անասսրնը ֆէլանրնը, ինչե՛ր ցուցուց ինձի շունշանորդին, հէ՛. մաղերս թիմդիք կայնեցուց... Հաժէ՛, ես կտեսնիմօր սաղ աշխարքնալ հոս թօփ էղիլ է. անպէսէնէ արքայութին մէ՞քատ մարդ չէրթալ։

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆ

Հազարէն մէքատը, ան ալ՝ աղքատ ու խեղճ մարդիք ին կնացողները. զէնկինները, ալլայն ալ սիւրուլով հոս կուգան։

ՄԵԼՔՕՆ ԱՂԱՆ (մատը ճակատին տանելէն)

Անոր համար Քիրիստոսը ասաց տա՞. աւելի խօլայ է, կասէ, պալապան տեւէյին ասեղին ծակէն անցունելը, քան թէ մեծատունին, կասէ, արքայութին խօթելը։ (Սատանան կամաց-կամաց կրքակվի) Վայ մեղի, վա՞յ մեղի... Զէ՛, աղբար, կտեսնիմօր պանրս տիպինէնէս պուրդ է. չօւթ վաղմի. էկէր սիտեղէն փախչելու՝լամն է—ան շունին ցննաժը՞... ան շունին ցննաժը՞, կիտիմ, անսահաթը էտեէս պիտ վաղէ ու պռնէ. ան ատե՛նը շթէ տուն տես պանե-

ըուս փեռատ էղաժը... Արի կ՝լայ իրեն տիմացը մէկ օյին պանեցունում, պէքիմ մէկ սլովմը կ՝կարնամ սիտեղէն քակվելու...

Մելքօն աղան սատանային կանչիմ տէյին ման էկաժն ալ անէր, մեմալ նայիս ադլին քովը չ՝կանրվի. շաշռմիշ արաժէն, մարդը քիչ մնաց միտքինը շիփ-շիտակ էլլէր ասէր։ Ինչ ալ՝լանէ քիչ մը ժողովեցաւ ու ասաց.

—Ասի՛սնէ ինձի, ճանիկս, իտա արքայութինի ճամփան ո՞ր սէմթն է։

—Հէհէ՞յ, հանա ա՞ն սէմթը մնաց։

—Մեմը էրթաս քուկուդ իտա Սաթայէլիդ ասիսն է՝ ես հոս իմ տէյին։

—Իտախատար պաներ աչքովդ տեսար ու կէ՛նէ ինձի խաբել կուզիս, որ մէկ սլովէն թայմիշ՝լաս սիտեղէն. կե՛ցիր տուն, մենք քուկուդ զէնիաթդ մոռցունել կուտանք, ասաց սատանան սիրտը էլլաժ։

—«Ա՛ս փաթլամիշ չեղաւ ու», միտքէն կասէր Մելքօն աղան, «խօրթօր սատանայէ էղիլ է շունշանորդին»...

—Սատանաներէն ալ պէթէր էղիլ իք տուք մարդիքդդ. մէկ պան ալ ծեղի խայիր չանիլ. Ասված պէլաներդ տայ. վայ ան սատանային որ ծեղի տահա չի ճանչնալնէ... Հէ՛յ կիտի սէնի ժամանակներ. մէկ ատէն մը, եփօր մարդիքը

սպասխթան կանոխ կէլլէին տեղերէն ու մենք ալ արդրխ չօխթան նացա խօլլամիշ անելէն կրդալէինքնէ, ալլային պերանն ալ «հրաժարիմք ի սատանայէ և յամենայն խաբէութենէ նորա» էր։ Շինար, ալլասսախլասրն, մենք ինքերս տիր տիր կտողանք մարդոցմէն, որ անունք մեղի չխաբին տէյին. ատոր համար ալ ալլայիս պերանն է՝ «հրաժարի՛մք ի մարդկանէ և յամենայն խաբէութենէ և մեքենայութենէ նորա» խօսքերը։

—Էյ անպէսէնէ հրաժարվէ՛ տուն ալ ինծիմէն ու պանը սիտեղը լմրննայ էրթայ շթէ... Կիտի՛ս ինչ է, աղբարս, քեզի մէկ պան ասի՞մ։ Փախցո՛ւր տուն սիտեղէն ինծի արքայութենի սէմթը. էկէր ես արքայութին էրթամնէ՝ իլլէքի քեզի համար ալ բարեխօսութին կանիմ. վո՛վ կիտնայ, մեմալ նայիս նորմրտէն հրէշտակ ալ կտառցունուն քեզի...

—Վո՞վ քեզի արքայութին կրխօթէ, սէրսէ՛մ, կանչից սատանան Մելքօն աղային վրան. Խնչի՞լ իս, չէնէ խանալուիս. քեզի արքայութին չէ, ասկեց վերջը շիտակ պապայիս էտուը պիտ էրթաս։ Աղէկ պան է էղիլ է. քեզի ապուլ տամ ծեռքէս ու քուկուդ տեղդ ես տանեմ, հա՞։

Մելքօն աղան սատանային աս խօսքերն

ալ լսիցն է, արքայութին էրթալէ ալայ մալայ ումեսը կտուից։

—Տէ՛ր Ասված, ասաց նա, ի՛նչ կ՚լայ, ինծի մեմալ աշխարք պերելու տասնէ. կեանքիս մէջը հիչ մեմալտա մեղք չիմ անիլ, Ասված ու կատր, չիմ անիլ...

—Ասկից էտև իտապէս պաներ հի՛չ միտքէդ մի անցունիլ. արդրխ ուշ է, ո՞ւշ, Մելքօն աղա... Հաղիրվէ՛ տուն արդրխ, շինար Սաթայէլը պիտ դայ, ասաց սատանան շտկրվելէն։

Մէկ տասը թախէի խատար անցած-չանցած, մեմալ նայիս կետինին տակէն մէկ զարհուրելի կռակռոցներ էլլաւ ու չաթաչաթ կածակներ զարնվեցաւ ամէն սէմթէն և դժոխքին պալապան խափխը մէկէն մէկ պացվեցաւ։ Օսկիէ թախտին վրան նստեցուցած՝ կամաց-կամաց վեր հանեցին աղլի Սաթայէլին —դժոխքին յաւիտենական թագաւորին։ Սաթայէլին չորս քովը լէփփէլի սուլթանրմ կայնիլ էին նարա բոլոր արքանեակները—դևերը, վիշապներն ու սատանաներուն ալլայ չէշիտը. ալլայն ալ կրակի կուն ունէին, ծեռքերն ալ կրակէ թուրեր պռնած։

Մելքօն աղան ամպէս մէկ զէշ վախեցաւ ու սասանեցաւ որ, պաշլայից զաւալրն տիրտիր տողալու. ան Սաթայէլին էրէսը նայածն

ալ անէր, քիչ մընաց մարդուն լեղին պատռէր ու խելքը կլօխէն թուռցուներ։ Խառշմիշ էղաժի պէսնակ եա-եա կնացու ճորովէն կարցաւ ասելու.

—Տէ՛ր, միդարձուցաներդերեսս քո չինէն...

—Քիչ մը անդին կնա, քեզի վերչէն ժան կուտան, ասաց սատանան ու Մելքօն աղային կոթց մէկ քովի։

Զար հրէշտակներն ու չար սատանաները պաշլայեցին Սաթայէլին ոտքերը ու փէշերը պաղնելու։ Սաթայէլը մեքամ մինտալ կախից աղլի մեծ սատանային վիզը՝ Մելքօն աղային ժեռքէն ապուլ չուտուվաժին համար։

—Պերօս-հոս իտաւուր նայիմ, հրամայից Սաթայէլը խապա ժանով։

Ան Թախէյին աղլի սատանան, մեհտալին խունտումէն, պռնից Մելքօն աղային եախայէն ու քաշքռտելէն տարաւ Սաթայէլին տիմացը ու ասաց։

—Սաթայէլը ապրաժ կենայ, շթէ սա՛ է Մելքօն Սարդիսիչ Ծաժկոցովը։

—Կիսի՛մ, ասաց Սաթայէլը։

Զա՛ւալը Մելքօն աղա Ծաժկոցով... Մէկ ատեն մը սաղ Խըրրմին մէջը ալլայիս ալ զվեսնըյ Մելքօն աղան՝ շինար քիշվիի պէսնակ թռռթռփ էղաժ, զանկռ-զանկռ տողալէն կնաց կայ-

նեցաւ Նորին Մեժուրթին Սաթայէլին թիթիզ սուռաթին տիմացը։

—Ես ի՞նչ արիլիմ օր, քու Սաթայէլական Մեժուրթին, ասաց Մելքօն աղան ու լալէն կօռալէն ինկաւ Սաթայէլին ոտքերը։

—Ինչ արիլ ի՞ս... հապա միտքդ չէ՞ ան օրերը, եփոր գործդ ուզենալիր իլլիքի վերչացունելուն՝ ամեն չէշիտ ցաժուրթինը ժեռքէդ դուքար. միտքդ չէ՞, ինչես Ասվաժային ի՛ր տուաժ օրը Քրիստոսին հարուր տապրա խաչէն վար կառնէիր, հարուր չիցուն տապրա սուտ էրթում կանէիր ու ատպէսնակով խանուրթիդ մէջը ի՛նչ խատար ալ հոտաժ պարի ունանալիրնէ՝ սաղլանտրռմիշ կանէիր, ասաց Սաթայէլը ու չրայը տառցուց Մելքօն աղային վրան։

—Քու Սաթայէլական Մենժուրթին, սախրն չ'հաւատաս, սատանաները սուտեր կրցդին վրաս...

—Սո՜ւս, փուչ կենդանի. կուզիս ինժի եա՞լ խաբելու։

—Է՛յ, թո էրթայ ատպէս թո՛ լայ. տահա ի՞նչ արիլ իմ օր...

—Մոռցա՞ր զայիր փռացէնթ առնելէն կեղացիներուն մարը լացաժդ, մոռցա՞ր սէմէյսթվայիդ քաղցաժ պայաժդ ու խամչիլա-

միշ անելէն կշտացուցածդ, մոռցա՞ր՝ մեքամ խունաճինի համար Սամէտինին Զիպիր խրկել տուածդ, մոռցա՞ր՝ օրդոցդ տանճելէն դերեզման խօթածդ, մոռցա՞ր՝ սուտ վէքսիլով նորմրաէն ստակ առածդ... վո՞ր մէկը ասիմ, հէ՞. տուն կիտիսօր արածներդ իմիս տէթերիս մէջը մէ-մէկ-մէմէկ կրած չէ՞, հա՞...

—Հա՛, քու Սաթայէլական Մենծութին, խօսքի վրայ, էկէր շնուռամօյ քնիկա ունիանը՝ ինքեար անելու չիմ կարնալ... Խօրթ է, ատունք ալլայն ալ արիլ իմ, ամա արածս ալ կնացիլ իմ ախռ մեր տէրպային խոստվանիլ իմ ու ճաշակվիլ իմ տա՞:

—Կալաճի չկայ, խոստվանիլ իս ու ճաշակվիլ իս, ամա թէմիզ սիրտով զղջացած չի՛ս: Մոռցա՞ր չէնէմի հա՞, տէրտէրին ալիմացը չոքած ու թափ խոստրվանած տաեղդ ալ խելքդ ու միտքդ սատէ առտուրիդ հետէր, ժամին մէջը կայնած՝ սատէ հէսապներ կանէիր ու տահա սիրտդ ալ կելլէր տէրտէրին էրկան պարակ երգածին վրան. կուզէիր թէզով խալսել ու նորէն պաշլայել այնաճի դէնիաթդ:

—Խօրթ է, արիլ իմ, ինչ անիմ... Մեղա՛յ Աստու, մեղա՛յ, ասաց Մելքօն աղան կոլոխը կետինին զարնելէն.

Սաթայէլը տացուաւ իրեն սատանաներուն ու հրամայից.

—Աս Մելքօն Ծաժկոցովին օրը մեմը խրդղրն փուռին մէջը կրանիք, անկից վերջը՝ օրը իրեք տապրա խայնար եղի մէջը կ՝խօթիք...

Մելքօն աղային ակռաները կպաշլային զանկռ-զանկռ զարնվելու ու խեղճին պաճախներն ալ կրկցին խրյշմիշ ՝լալու:

—Ու չունքի, կասէ Սաթայէլը, ատեղ ալ կուզէր իմ Սաթայէլական Մենծութանը խաբելունէ՝ ատոր համար օրը իրեք-իրեք շէրէվի հալած խուռշին կուլլուք պերանը...

—Ախռ, քու Սաթայէլական Մենծութինը...

—Սո՞ւս... ժանդդ, վայրենի անասուն, կռռաց Սաթայէլը ու ոտքի կայնած՝ պաշլայից իրեն վերջին դատաստանը կտռելու՝ Մելքօն Սարգիսիչ Ծաժկոցովին արածմեղքերուն համար:

Մելքօն աղան քանի կէրթար թախէթէ, հալէ կիյնէր, քանի կէրթար կրծռվէր:

—Ամենակարող Աստուծու բարկութինով, կօռաց Սաթայէլը, ես չար Սաթայէլս, դժոխքի յաւիտենական թագաւորը, իշխանն ու դատաւորը, մութին ու խաւարին պաշտպանը, տէրն ու տիրականը. լուսին, պայծառութինին, ազատութինին, արդարութինին, օղորմութինին, մարդասիրութինին, ամէ՞ն բարու-

թինին ու ամէ՞ն ճշմարտութինին տուշմանն ու խարէզը. ստութենի, անիրաւութենի, անօրէնութենի ու անզգամութենի, կողութենի ու աւազակութենի, գաղանութենի ու մարդասպանութենի, ամէ՞ն լրփութենի ու ամէ՞ն չարութենի անվերջանալի աղբիւրը, յաւիտենական հրամայողն ու առաջնորդողը, իսկզբանէ անտի մինչ ցկատարածն աշխարհի—հրամայելով կ'հրամայիմ Ծեզի, իմիս հաւատարիմ արբանեակներս՝ չա՛ր դևեր, չա՛ր սատանաներ, չա՛ր վիշապներ, չա՛ր հրէշտակներ, չա՛ր գորժանողներ, չա՛ր խորուրդ տուողներ, չա՛ր կամք կատարողներ ու ամէ՞ն չար զօրութին ունեցողներ,—տարէ՛ք իսա Մելքօն Սարգիսիչ Ծաժկոցովին, ցրգեցէ՛ք, վասն մեղաց իւրոց, դժոխքին յաւիտենական կրակին մէջը ու կատարեցէք նարա կուլխուն ա՛ն ամէնը, ինչ որ Ծեզի հրամայեցի։ «Անդ եղիցի լայ և կրճել ատամանց»...

Ցատէկէնտէ սատանաները խափխափ կրպռնին աղի Մելքօն աղային ու կպերին դժոխքին տուռին քովը։

—ՔառաՀ՚... աման հասէ՞ք, հասէ՞ք, կկանչէ Մելքօն աղան, ամա վո՞վ պիտ լսէ նարա ծանը։

Սատանաները մեմը վեր-վեր կ'հանին Մելքօն աղային իրենց ծեռքերուն վրան ու մէկէն մէկ վար կրթապլին դժոքին է՛նկ խրզրը տեղը։

1904. փետրվարի 11.
Հին-Ղրիմ.

«Ազգային գրադարան»
NL0254641

ՆՈՑՆ ՀԵՂԻՆԱԿԻ

(տպագրած)

1. Մեկքօն տպալին սթօռիան (գրիմի բարբառով) . . . . . 15 կոպ.
2. Մի՛ լար. բօմանա . . . . . 60 »
3. Փարօսի վրա . . . . . 5 »

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ

4. Պատմութիններ խրիմցիներուն կեանքէն (գրիմի բարբառով)։
5. Խէչօյի ընդդիմախօսութիւնը։

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Գրքերի պահեստը գանվում է՝ г. Старый Крымъ (Таврич. губ.) А. М. Туманьянцъ. Վաճառվում են նաև Թիֆլիզում — Գուտենբերգ և Կենտրոնական գրավաճառանոցներում։